



**ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ  
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ**

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ  
2011-2015 թթ.**

**ՎԱՆԱԶՈՐ-2011 Թ.**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հիմնական տեղեկություններ . . . . .	3
ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գործունեության ընդհանուր նկարագրություն	4
- 2006-2010 թվականների ռազմավարության ընդհանուր ամփոփում . . . . .	4
<b>Իրավիճակի վերլուծություն . . . . .</b>	<b>7</b>
- Ընտրական գործընթացներ . . . . .	7
- Հավաքների, միավորման ազատություն և ազատ տեղաշարժի իրավունք . . . . .	9
- Մամուլի և խոսքի ազատություն . . . . .	10
- Արդար դատաքննության իրավունք . . . . .	11
- Մտքի, խղճի և կրոնի ազատություն . . . . .	11
- Խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք . . . . .	13
- Ոստիկանություն . . . . .	13
- Քրեակատարողական հիմնարկներ . . . . .	15
- Նյարդահոգեբուժական բուժհաստատություններ . . . . .	15
- Զինված ուժեր . . . . .	16
- Փակ և կիսափակ հաստատություններ . . . . .	17
- Սոցիալական իրավունքներ . . . . .	17
- Պացիենտների իրավունքներ . . . . .	18
- Կառավարում, վարչարարություն և կոռուպցիա . . . . .	19
- Տեղական ինքնակառավարման մարմիններ . . . . .	20
- Խաղաղասիրություն . . . . .	21
- Քաղաքացիական հասարակության մարտահրավերները . . . . .	22
<b>Կազմակերպության ռազմավարական և օպերատիվ նպատակներ . . . . .</b>	<b>24</b>
- Քաղաքացիական նախաձեռնություն և շահերի պաշտպանություն . . . . .	24
- Մարդու իրավունքներ . . . . .	25
- Խաղաղասիրություն . . . . .	26
<b>«ՀՔԱ Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության կառուցվածք</b>	<b>27</b>

## Հիմնական տեղեկություններ

Ելսիմկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (այսուհետ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակ) հիմնադրվել է 1998 թվականին՝ որպես ՀՔԱ Հայաստանի կոմիտեի մասնաձյուղ, գրանցվել է 2001 թվականին և վերագրանցվել է 2005 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունում:

Կազմակերպության գրասենյակը գտնվում է Լոռու մարզկենտրոնում՝ Վանաձոր քաղաքում: Լոռու մարզը իր տարածքով (3789 կմ<sup>2</sup> տարածքով՝ Հայաստանի տարածքի 12.7%-ը) հանրապետության երրորդ մարզն է: Մարզի բնակչությունը կազմում է 283,900 մարդ (2001 թվականի մարդահամարի տվյալներով), որի 59.3%-ը քաղաքաբնակ է:

Կազմակերպության գործունեության աշխարհագրությունը ըստ առանձին ծրագրերի և գործողությունների ընդգրկում է ինչպես Լոռու մարզը, այնպես էլ հանրապետության ողջ տարածքը: Վերջին հինգ տարիների ընթացքում գործողությունների զգալի մասն ընդգրկել է հանրապետության հյուսիսային շրջանները:

Կազմակերպության գործունեության հիմնական բնագավառներն են՝ մարդու իրավունքների պաշտպանություն, քաղաքացիական նախաձեռնությունների խթանում ու շահերի պաշտպանություն և խաղաղասիրություն:

Իր գործունեությունն իրականացնելիս կազմակերպությունը ելնում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի, նորմերի տեղայնացման և պաշտպանության անհրաժեշտությունից:

*Հայաստանի Հանրապետությունը Միացյալ ազգերի կազմակերպությանն անդամագրվել է 1992 թ. մարտի 22-ին, իսկ Եվրոպայի խորհրդին՝ 2001 թվականի հունվարի 25-ին: Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է միջազգային և տարածաշրջանային մի շարք կոնվենցիաներ և փաստաթղթեր՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը և կից արձանագրությունը, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին կոնվենցիան (1993 թվական)<sup>1</sup>, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, կից արձանագրությունը (2002 թվական), Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան (2001 թվական), Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան (2001 թվական), Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիան (2001 թվական):*

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ընդունվել է 1995 թվականի հուլիսի 5-ի հանրաքվեով, և սահմանադրական փոփոխությունները կատարվել են 2005 թվականի նոյեմբերի 27-ի համաժողովրդական հանրաքվեի արդյունքում:

Համաձայն Սահմանադրության՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է, և պետական իշխանությունն իրականացվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

ՀՀ վարչատարածքային միավորներն են՝ թվով 10-ը մարզերը և 926 համայնքները (48 քաղաքային համայնքներ, 866՝ գյուղական), որտեղ իշխանությունն իրականացվում է ուղղակի ընտրությունների միջոցով ձևավորված տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ղեկավարի և ավագանու միջոցով: Մայրաքաղաք Երևանում համայնքի ղեկավար ընտրվում է ավագանու առավել շատ ձայներ հավաքած կուսակցության ներկայացուցիչը:

<sup>1</sup> Բոլոր միջազգային փաստաթղթերի ցանկը, որոնց Հայաստանը միացել է՝ [http://www.coe.am/index.php?cat\\_id=37](http://www.coe.am/index.php?cat_id=37), <http://www.un.am/?!aid=1&com=module&module=menu&id=105>

## ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գործունեության ընդհանուր Նկարագրություն

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը ոչ քաղաքական, ոչ կրոնական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատների:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի

**տեսլականն է՝** մարդու արժանապատվության, ժողովրդավարության և խաղաղության գերակա արժեքներով ձևավորված հասարակություն,

**առաքելությունն է՝** ազգային և տարածաշրջանային մակարդակներում քաղաքացիական նախաձեռնությունների աջակցությունն ու խթանումը, խաղաղասիրական ու իրավապաշտպանական գործունեության հզորացումը:

Կազմակերպությունը 1998-2010 թվականների ընթացքում իրականացրել է շուրջ 30 դրամաշնորհային ծրագրեր<sup>2</sup>:

### 2006-2010 թվականների ռազմավարության ընդհանուր ամփոփում

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 2005 թվականին մշակեց իր առաջին ռազմավարությունը 2006-2010 թթ. համար<sup>3</sup>, որը հանդիսացավ և՛ նախորդած յոթ տարիների գործունեության ամփոփումը, և՛ կազմակերպության առաջիկա գործունեության հստակեցումն ըստ նպատակների և խնդիրների:

2006-2010 թվականների ռազմավարական նպատակների ուղղությամբ իրականացվել են 11 ծրագրեր:

Ռազմավարական խնդիրների լուծման տեսակետից հատկապես կարևոր նշանակություն ունեցավ 2007-2010 թվականներին իրականացված «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի իրավապաշտպանական կարողությունների զարգացումը և գործունեության արդյունավետության բարձրացումը» ծրագիրը (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաձյուղի և Նիդերլանդների Թագավորության կառավարության ֆինանսավորմամբ): Այս ծրագրի կարևոր արդյունքներից է մարդու իրավունքների մոնիթորինգների ինստիտուցիոնալ ձևավորումը և կայացումը: Առաջին անգամ հանրապետությունում մշակվեցին և գործարկվեցին մարդու իրավունքների վիճակի բացահայտման գործիքներ նյարդահոգեբուժական բուժհաստատություններում, մանկատներում, ծերանոցներում, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում: Գործիքները մշակվեցին Լեհաստանի մարդու իրավունքների հելսինկյան հիմնադրամի մասնագետների աջակցությամբ:

Առաջին ռազմավարության իրականացման հաջողված արդյունքներից է զորակոչի գործընթացի նկատմամբ վերահսկողության ձևավորումը: Մշակվեցին մոնիթորինգի իրականացման գործիքներ, որոնք առաջին անգամ գործարկվեցին Լոռու մարզում գարնանային և աշնանային զորակոչի ընթացքում (ծրագիրն իրականացվել է Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի

<sup>2</sup> [http://www.hcav.am/hcav.php/language\\_arm/LabelId\\_2000/page.html](http://www.hcav.am/hcav.php/language_arm/LabelId_2000/page.html)

<sup>3</sup> ՀՔԱ Վանաձորի գրասենյակի 2006 - 2010 թթ. ռազմավարական պլան [http://www.hcav.am/Downloads/strategy\\_arm.pdf](http://www.hcav.am/Downloads/strategy_arm.pdf)

հայաստանյան մասնաձյուղի ֆինանսավորմամբ): Այս ծրագրի արդյունքների շարունակությունը հանդիսացավ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հետ համատեղ իրականացված «Հայաստանում քաղաքացիական վերահսկողություն գորակոչի նկատմամբ» ծրագիրը:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության, հաշվետվողականության և կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման բնագավառում էական էր «Շահերի պաշտպանության և աջակցման կենտրոնի ստեղծում և գործարկում Վանաձոր քաղաքում» ծրագիրը, որի շրջանակներում խորհրդատվություն է տրամադրվել Լոռու մարզի 410 քաղաքացու, և կազմակերպության կողմից նախաձեռնվել են 17 դատական գործեր (ծրագիրը ֆինանսավորվում էր ԱՄՆ ՄՁԳ կողմից):

Շահերի պաշտպանության բնագավառում ակնառու հաջողություն է հանդիսանում Միջազգային Կարմիր Խաչի կոմիտեի տիպային օրենքին համապատասխան «Անհայտ կորածի մասին» օրենքի մշակման աշխատանքային խմբի ձևավորումը ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից՝ տարբեր գերատեսչությունների, Միջազգային Կարմիր Խաչի կոմիտեի և ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցների ներգրավմամբ: Այն հանդիսացավ կազմակերպության ինը տարիների գործունեության արդյունքներից և որպես ՀՀ կառավարության ծրագրային գործողություն՝ նախատեսվում է օրենքի նախագծի ընդգրկումը ՀՀ ԱԺ օրակարգ:

2006-2010 թվականներին կազմակերպության գործունեության աշխարհագրությունն ընդլայնվեց Լոռու մարզի քաղաքներում, հանրապետության տարբեր մարզերում, հատկապես հյուսիսային՝ Շիրակի և Տավուշի մարզերում, ինչպես նաև Երևան քաղաքում: Քաղաքացիների իրավական անվճար խորհրդատվության ծառայությունը սկսեց իրականացվել Լոռու մարզի Ալավերդի, Տաշիր, Սպիտակ, Ստեփանավան քաղաքներում կազմակերպության կողմից հիմնադրված ներկայացուցչությունների միջոցով:

Առաջին անգամ Հայաստանի Հանրապետությունում մարզային մակարդակում կազմվեցին և հրապարակվեցին մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ տարեկան զեկույցներ:

Իրավապաշտպան գործունեության տարածման և հզորացման արդյունք է հանդիսանում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի՝ Սպիտակ քաղաքի ներկայացուցչության՝ որպես «Սպիտակի հելսինկյան խումբ» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն, գրանցումը:

Ընդլայնվեց կազմակերպության համագործակցությունը նոր գործընկեր հասարակական կազմակերպությունների և փորձագետների հետ՝ Նորվեգիայի հելսինկյան կոմիտե, Հարավկովկասյան իրավապաշտպանների ցանց, Մարդու իրավունքների կենտրոն (Վրաստան), Հակաթմրամոլային քաղաքացիական դաշինք, Իրական աշխարհ, իրական մարդիկ, Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտ, ՀՀ փաստաբանական պալատի անդամներ:

Առաջին ռազմավարության իրականացման մյուս կարևոր հաջողությունն է հանդիսանում «Քաղաքացիական վերահսկողության ձևավորումը զինված ուժերի նկատմամբ» ծրագրի իրականացումը (ծրագիրը ֆինանսավորվել է նիդերլանդական ICCO կազմակերպության կողմից): Գործընկեր կազմակերպությունների փորձագետների մասնակցությամբ հիմնվեց աշխատանքային խումբ՝ ռազմական բյուջեի մոնիթորինգի իրականացման նպատակով: Մոնիթորինգի իրականացման սկզբունքները և մեթոդները մշակվել են Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի անվտանգության և պաշտպանության կառավարման կենտրոնի փորձագետի մասնակցությամբ:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության իրականացումը կարևոր նշանակություն ունի սառեցված կոնֆլիկտի վերսկսումը կանխարգելելու տեսակետից՝ ռազմական ծախսերի աննախադեպ աճի պայմաններում:

Խաղաղասիրության բնագավառում հաջողված արդյունք է հանդիսանում «Երիտասարդ խաղաղասերների բրիգադի ձևավորումը» ծրագրի իրականացումը, որին մասնակցեցին շուրջ 30 երիտասարդներ Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից և Ադրբեջանից: Երիտասարդ խաղաղասերները ձեռք բերեցին կարողություններ կոնֆլիկտից տուժածների՝ անհայտ կորածների, նախկին ռազմագերիների

և փախստականների խնդիրների ուսումնասիրման և շահերի պաշտպանության համար և իրականացրեցին համապատասխան ուսումնասիրություններ:

Առաջին ռազմավարության իրականացման ընթացքում կազմակերպության համար լուրջ փորձություն հանդիսացան 2008 թվականի նախագահական ընտրություններից հետո և 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունները, 2008 թվականի վրաց-ռուսական կարճատև պատերազմը, որոնք էական ազդեցություն ունեցան կազմակերպության ռազմավարական նպատակների իրականացման վրա: Մասնավորապես՝ բացահայտվեց մարդու իրավունքների խախտումներին արագ արձագանքելու մեխանիզմների արդյունավետությունը, որոնք ձևավորվել էին նախընտրական ժամանակաընթացքում:

Ճգնաժամային իրավիճակներում, մասնավորապես՝ 2008 թվականի փետրվարի 19-ից մարտի 1-ը և 2008 թվականի մարտի 1-20-ը, մարդու իրավունքների լայնածավալ խախտումներին կազմակերպությունը կարողացավ արձագանքել, կազմել համապատասխան զեկույցներ, հայտարարություններ, որոնք ներկայացվեցին շահագրգիռ միջազգային կառույցներին և հասարակությանը:

«Երիտասարդ խաղաղասերների բրիգադի ձևավորում» ծրագրի շրջանակներում Թբիլիսիում կազմակերպվելիք հանդիպման համար լուրջ մարտահրավեր հանդիսացավ վրաց-ռուսական պատերազմը: Այնուամենայնիվ հանդիպումը կայացավ շնորհիվ երիտասարդ խաղաղասերների պատրաստականության:

Արդյունավետ կարելի է համարել սոցիալապես խոցելի խմբերի, մասնավորապես՝ թմրամիջոց գործածողների իրավունքների պաշտպանության բնագավառում կազմակերպության կողմից իրականացված ծրագրերը (ծրագրերն իրականացվել են Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաձյուղի ֆինանսավորմամբ):

Առաջին ռազմավարության իրականացման ընթացքում ծագեցին խնդիրներ և դժվարություններ, որոնց լուծումը էական նշանակություն ունեին կազմակերպության հետագա գործունեության արդյունավետության համար: Մասնավորապես՝ անհրաժեշտ է կազմակերպության աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացում՝ մարդու իրավունքների նոր մարտահրավերներին համարժեք դիմագրավելու և իրավապաշտպանական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար: Մասնագիտական կարողությունները կարևորվում են հատկապես մարդու իրավունքների պաշտպանության ազգային մեխանիզմների հզորացման ուղղությամբ նոր խնդիրների լուծման անհրաժեշտության տեսանկյունից:

2011-2015 թվականների ռազմավարության մշակմանը նախորդեց կազմակերպության գործունեության գնահատումը Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաձյուղի կողմից, որի հիմնական եզրակացության համաձայն՝ կազմակերպությունը թևակոխել է ինստիտուցիոնալ զարգացման նոր փուլ:

Այս փուլի հիմնական բնութագիրն է՝ առանձին ծրագրերով իրականացվող գործունեությունը ինստիտուցիոնալ գործունեությամբ փոխարինումը:

## Իրավիճակի վերլուծություն

2006-2010 թվականներին կազմակերպության ռազմավարության իրականացման ընթացքում ի հայտ եկան մի շարք մարտահրավերներ մարդու իրավունքների, խոսքի ազատության, ազատ ու թափանցիկ ընտրությունների կայացման, կոռուպցիայի կանխարգելման, կառավարման համակարգի, տնտեսության զարգացման, չկարգավորված հակամարտությունների և այլ բնագավառներում, որոնք ունեն համակարգային նշանակություն ամբողջ հանրապետության համար:

Արդյունքում, Հայաստանում ժողովրդավարությունն ապրել է հետընթաց, որի մասին վկայում են ինչպես բազմաթիվ միջազգային կառույցների կողմից մարդու իրավունքների և ժողովրդավարության վիճակի վերաբերյալ զեկույցները<sup>4</sup>, այնպես էլ կազմակերպության գործունեության արդյունքները:

Bertelsmann Transformation Index (BTI)-ի<sup>5</sup> համաձայն՝ ժողովրդավարությունը Հայաստանում 2010 թվականին նվազել է՝ հասնելով 5 միավորի 2008 թվականի 6 միավորի համեմատությամբ (ըստ 1-10 բալանոց սանդղակի, որտեղ 1-ը՝ նվազագույն, իսկ 10-ը առավելագույն ցուցանիշն է):

2008 թվականին շուկայական տնտեսության բնագավառում գնահատականը կազմել է 6.32 միավոր, իսկ քաղաքական կառավարման արդյունավետության ցուցանիշը՝ 5.14:

2010 թվականին նշված ցուցանիշները զգալիորեն նվազել են՝ հասնելով 6.50՝ շուկայական տնտեսության, 4.36՝ քաղաքական կառավարման բնագավառներում:

Իրավիճակի նման գնահատականը 2008 թվականի նախագահական ընտրությունների հետևանքով առաջացած քաղաքական ձգնաժամի արդյունք է: Ըստ Freedom House "Nations in Transit 2009"<sup>6</sup> զեկույցի՝ Հայաստանում ընտրական գործընթացը գնահատվել է 5.75՝ 2008 թվականի 5.50-ի փոխարեն (ըստ 1-7 գնահատման սանդղակի, որտեղ 1-ը համարվում է առավելագույն դրական ցուցիչը):

Մինևույն ժամանակահատվածում ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում դարաբաղյան կոնֆլիկտի խաղաղ կարգավորմանը զուգահեռ տեղի ունեցավ Հայաստանում և Ադրբեջանում ռազմականացման մակարդակի աննախադեպ աճ, որը ոչ միայն ազդեցություն ունի կոնֆլիկտի խաղաղ կարգավորման, այլև ժողովրդավարական ինստիտուտների կայացման վրա:

### Ընտրական գործընթացներ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 1999-2010 թվականների ընթացքում իրականացրել է 11 ընտրական գործընթացի դիտորդություն, որոնց արդյունքները<sup>7</sup> վկայում են ինչպես ընտրական իրավունքների խախտումների համակարգային բնույթի, այնպես էլ նրանց կանխարգելման իրավական մեխանիզմների անարդյունավետության մասին:

2008 թվականի նախագահական ընտրությունների ընթացքում Լոռու մարզի 5 քաղաքներում իրականացված դիտորդական առաքելության արդյունքում կազմակերպությունը հանգել է հետևյալ եզրակացությանը. «Ազատ և արդար ընտրությունների ապահովման համար կարևորագույն սկզբունքներից և ոչ մեկը 2008 թվականի նախագահական ընտրությունների ընթացքում չի պահպանվել: ՀՀ

<sup>4</sup> 1. Bertelsmann Transformation Index (BTI) 2010 Armenia Country Report  
 2. Freedom House "Nations in Transit 2009" <http://www.freedomhouse.hu/images/nit2009/armenia.pdf>  
 3. Human Rights Watch "Democracy on Rocky Ground"  
 4. International Crisis Group "Turkey and Armenia: Opening Minds, Opening Borders"  
 5. International Crisis Group  
 6. 2009 Country Reports on Human Rights Practices  
<sup>5</sup> 1. Bertelsmann Transformation Index (BTI) 2010 Armenia Country Report  
 2. Bertelsmann Transformation Index (BTI) 2008 Armenia Country Report  
<sup>6</sup> Freedom House "Nations in Transit 2009" <http://www.freedomhouse.hu/images/nit2009/armenia.pdf>  
<sup>7</sup> [http://www.hcav.am/index.php/language\\_arm/sectionid\\_1/LabelId\\_29/Publications.html](http://www.hcav.am/index.php/language_arm/sectionid_1/LabelId_29/Publications.html)

նախագահական ընտրությունների կազմակերպման և իրականացման գործընթացը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կողմից Եվրախորհրդի առջև ստանձնած պարտավորություններին, ԵԱՀԿ Ժողովրդավարական ընտրությունների համար սահմանված չափանիշներին<sup>8</sup>:

2008 թվականի նախագահական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում իշխանության կողմից վարչական ռեսուրսների համատարած կիրառմամբ իրականացված ձնշումները, մարդու իրավունքների զանգվածային ոտնահարումները և քաղաքական հետապնդումները կրեցին շարունակական բնույթ և նորովի արտահայտվեցին հետընտրական շրջանում՝ վերածվելով բռնի ուժի կիրառման:

Քվեարկության արդյունքների դեմ դրսևորված անհամաձայնության՝ բողոքների հրապարակային զանգվածային միջոցառումների նկատմամբ իշխանությունները շարունակեցին կիրառել ապօրինի ձեռքարկություններ, բռնություններ, նախընտրական շրջանի անհիմն քրեական հետապնդումներ և իրականացվեցին դատավարություններ:

2008 թվականի մարտի 1-ին խաղաղ ցուցարարների նկատմամբ իշխանությունները կիրառեցին զինված ուժ, որի հետևանքով զոհվեցին առնվազն 10 քաղաքացիներ:

Դրան հաջորդեց հանրապետության նախագահի կողմից 2008 թվականի մարտի 1-ից 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում արտակարգ դրության հայտարարումը՝ «Արտակարգ դրության մասին» օրենքի բացակայության պայմաններում:

Իրականում Երևան քաղաքում արտակարգ դրության պայմանները՝ հավաքների, խուսքի ազատության, ազատ տեղաշարժի սահմանափակումները տարածվեցին Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Այդ ընթացքում քաղաքացիները հնարավորություն ունեին ստանալ միայն պաշտոնական տեղեկատվություն իշխանամետ լրատվամիջոցներից:

Չնայած Սահմանադրությամբ արտակարգ դրության պայմաններում ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ընտրական դիմումների քննարկման սահմանափակմանը՝ տեղի ունեցավ ՀՀ սահմանադրական դատարանի նիստ, որով ձանաչվեցին ընտրության արդյունքները:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից 2008 թվականի ընտրություններից հետո իրականացված մոնիթորինգի արդյունքում արձանագրվեցին հետընտրական ժամանակաշրջանում Լոռու մարզում իրավապահ մարմինների կողմից քաղաքացիների նկատմամբ հետապնդումների փաստեր<sup>9</sup>: Անօրինական խուզարկությունները, ոստիկանության բաժիններ ապօրինի բերման ենթարկելը, ազատագրվումները հանդիսացան քաղաքական և քաղաքացիական իրավունքների համատարած խախտման փաստեր:

Դեռևս լուծում չեն ստացել այն բոլոր խնդիրները, որոնք առաջացել էին ընտրական իրադարձությունների առնչությամբ, մասնավորապես՝ չբացահայտված են մնում տասը քաղաքացիների սպանության հանգամանքները, մոտ 10 քաղբանտարկյալներ գտնվում են անազատության մեջ: Պետության կողմից չեն կատարվել Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի ընդունած բանաձևերով տրված հանձնարարականները:

<sup>8</sup> Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի «Մարդու իրավունքները Լոռու մարզում» 2009 թ. զեկույց, Մաս 6 [http://www.hcav.am/attachments\\_/01232\\_zekuyc\\_2009.07.01%5B1%5D-arm.PDF](http://www.hcav.am/attachments_/01232_zekuyc_2009.07.01%5B1%5D-arm.PDF)

<sup>9</sup> Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի «2008 թվականի նախագահական ընտրությունների Լոռու մարզի հետընտրական իրադարձությունների մասին» նախնական զեկույց [http://www.hcav.am/attachments\\_/cb46c\\_postelectinons\\_arm%5B1%5D.pdf](http://www.hcav.am/attachments_/cb46c_postelectinons_arm%5B1%5D.pdf)



## Հավաքների, միավորման ազատություն և ազատ տեղաշարժի իրավունք

Վերջին երկու տարիների ընթացքում հանրապետությունում կազմակերպված հավաքները կա՛մ սահմանափակվել են արհեստական խոչընդոտների առաջացմամբ, կա՛մ արգելվել են: Երևան քաղաքում կազմակերպվելիք հանրահավաքների օրերին մարզերից մայրաքաղաք տանող միջքաղաքային ճանապարհներն առանց հիմնավոր պատճառների անցել են ոստիկանության ուղղակի վերահսկողության տակ: Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ 2008 թվականից մինչև 2010 թվականի մարտ ամիսը Երևանում կազմակերպվելիք հավաքների օրերին քաղաքացիները հնարավորություն չեն ունեցել մարզերից հասնել Երևան<sup>10</sup>: Նշված խոչընդոտները վերացնելու նպատակով կազմակերպության կողմից ՀՀ ոստիկանությանը, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումները որևէ արդյունքի չեն հանգեցրել: Ավելին, ոստիկանությունը ամեն կերպ հերքում է ազատ տեղաշարժի սահմանափակումների փաստերը: Նույնիսկ ազատ տեղաշարժման սահմանափակումների իրավական հիմքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը կազմակերպությունը 2009 թվականին հասել է դատական կարգով:

Մարզերում նախատեսվող հրապարակային միջոցառումների կազմակերպումը խոչընդոտվել է տարածքներ չտրամադրելու, արհեստական անկարգություններ հրահրելու և խժոժություններ առաջացնելու միջոցով: Երևան քաղաքի քաղաքապետարանի կողմից կազմված վիճակագրության համաձայն՝ սկսած 2004 թվականից, երբ ընդունվել է ՀՀ օրենքը «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին», քաղաքապետարանը խաղաղ հավաքների կայացման վերաբերյալ 696 ծանուցում է ստացել, որից 190-ը միայն 2008 թվականին, ընդ որում 96-ը միայն վերջին 5 ամիսների ընթացքում: 2009 թվականի մայիսի 1-ից ստացված 75 ծանուցումներից 23-ը, որից 22-ը առաջարկվում էին անցկացնել Հյուսիսային պողոտայում, մերժվել են:

Ներկայումս բոլոր հնարավոր լծակներն օգտագործելով՝ իշխանությունները շարունակում են սահմանափակել քաղաքացիների խաղաղ հավաքների և միավորման ազատությունը:

Դեռևս 2000 թվականին Լոռու մարզի Վանաձոր քաղաքի քաղաքապետի թիվ 707 որոշումը՝ հրապարակային միջոցառումների անցկացման համար քաղաքի ծայրամաս հանդիսացող ոչ բանուկ տարածքի հատկացման մասին, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից բողոքարկվել է և դատական կարգով ձանաչվել առ ոչինչ՝ դրանով իսկ նպաստելով հավաքների և ցույցերի իրականացման համար արհեստական խոչընդոտների վերացման գործընթացին:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 2008 թվականի նախագահական ընտրություններից հետո՝ փետրվարից մինչև հուլիս ամիսների ընթացքում, Վանաձոր քաղաքում արտակարգ դրության պայմաններում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու նպատակով հանրահավաքի կազմակերպման համար 6 իրազեկման դիմում է ներկայացրել, որոնցից 5-ը մերժվել են:

Այսպես, 2010 թվականի հունիս ամսին ավարտելով Հայաստան կատարած իր այցելությունը՝ ՄԱԿ-ի իրավապաշտպանների հարցերով հատուկ զեկուցողը՝ Մարգարեթ Սեկագիան, հրապարակել է հայտարարություն, որում մասնավորապես նշում է. «Մտահոգիչ է այն, որ Հայաստանում իրականացվում են խաղաղ հավաքների ազատության լուրջ սահմանափակումներ: Սահմանափակվում են նաև ոչ բացօթյա ժողովները՝ հանդիպումները և կոնֆերանսները, որոնց համար տարածք պատվիրելիս և որոնց մասնակցելիս իրավապաշտպանները բախվում են դժվարությունների: Լրացուցիչ մտահոգություն են առաջացնում հավաքների ազատության անդրադարձները Հայաստանում՝ ընտրությունների համատեքստում»: Իսկ հայտարարության եզրափակիչ մասի առաջարկությունների շարքում նշվում է.

<sup>10</sup> Տեղաշարժի արգելման մասին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ռեպորտաժները տե՛ս [http://www.hcav.am/articles.php/language\\_arm/date\\_2009-05-01/article\\_3069/The\\_Roads\\_to\\_Yerevan\\_are\\_Closed\\_Again.html](http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2009-05-01/article_3069/The_Roads_to_Yerevan_are_Closed_Again.html)

«Երաշխավորել, որ խաղաղ, բաց և հրապարակային ցույցերի իրավունքը ազատորեն վայելի բոլոր անհատների կողմից, առանց անհարկի սահմանափակումների»<sup>11</sup>:

## Մամուլի և խոսքի ազատություն

Ըստ 2009 թ. Freedom House-ի կողմից հրապարակված «Nations in Transit»<sup>12</sup> տարեկան զեկույցի՝ Հայաստանի Հանրապետությունում մամուլի ազատության վիճակը վատթարացել է՝ 2007 թվականի 5.50 միավորից դառնալով 6 միավոր (1-7 գնահատման սանդղակով, որտեղ 1-ը ժողովրդավարական առաջընթացի առավելագույն աստիճանն է, իսկ 7-ը՝ նվազագույն):

Չանգվածային լրատվության միջոցները (այսուհետ՝ ՉԼՄ-ները) Հայաստանում՝ հատկապես ոչ մայրաքաղաքային տարածաշրջաններում, որպես քաղաքացիական հասարակության աջակցողներ, թույլ են զարգացած և գրեթե լիովին կախված են իշխանություններից: Մարզերում մարդու իրավունքների խախտման վերաբերյալ տեղեկատվությունը հնարավոր է լինում տարածել միայն հանրապետական ընդդիմադիր տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներով:

Չնայած սահմանադրական երաշխիքներին, գործնականում իշխանության տարբեր կառույցներ պարբերաբար խախտում և սահմանափակում են այդ իրավունքները: 2008 թվականի մարտի 1-ի իրադարձություններից հետո մամուլը ենթարկվում է գրաքննության, իսկ լրագրողները ենթարկվում են բռնությունների, սպառնալիքների և հետապնդումների:

2010 թվականին օրենսդրության փոփոխությունների արդյունքում խոսքի ազատության, մասնավորապես՝ զրպարտության և վիրավորանքի հոդվածներն ապաքրեականացված են և նախատեսված է տուգանք մեկ միլիոն դրամի չափով: Եթե այն տարածվել է որևէ ՉԼՄ-ի կողմից, տուգանքի չափը կազմում է երկու միլիոն դրամ<sup>13</sup>:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ օրենսդրական նախաձեռնությունը կատարվել է այն բանից հետո, երբ ԵԽ Վեներտիկի հանձնաժողովը երկու բացասական եզրակացություն է ներկայացրել այդ օրինագծերի վերաբերյալ: Լրագրողների մտահոգությունն այն է, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունները, որոնք այսօր ամբողջությամբ վերահսկում են հեռուստաընկերությունների գործունեությունը, փորձ են անելու լռեցնել տպագիր մամուլը, որը հարաբերականորեն ազատ է<sup>14</sup>:

Շատ մասնավոր լրատվամիջոցներ արտահայտում են ավելի լայն շրջանակների կարծիքները՝ առանց սահմանափակումների, սակայն մնում են տնտեսական և քաղաքական շահեր ունեցող խմբերի ու անհատների ազդեցության ներքո:

Իր գործունեության ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ևս առնչվել է տեղեկատվության տարածման սահմանափակումներին: Մասնավորապես՝ 2008 թվականի նախագահական ընտրություններից հետո de jure Երևան քաղաքում հայտարարված, սակայն de facto Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործող արտակարգ իրավիճակի պայմաններում կազմակերպությունը փորձեց տեղեկատվություն տարածել երկրում տիրող իրավիճակի վերաբերյալ, սակայն տեղական տպարանի նկատմամբ կիրառված ձնշումների արդյունքում՝ վերջինս հրաժարվեց տպագրել:

Հայաստանի Հանրապետությունում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով երաշխավորվում է քաղաքացիների տեղեկատվություն ստանալու իրավունքը, սակայն հակասության մեջ գտնվելով այլ իրավական ակտերի հետ՝ այդ իրավունքը գործնականում արդյունավետորեն չի ապահովվում:

2003 թվականից ՀՔԱ Վանաձորի գրասենյակն ակտիվորեն կիրառում է «Տեղեկատվության ազա-

<sup>11</sup> ՄԱԿ-ի իրավապաշտպանների հարցերով հատուկ զեկուցող Մարգարեթ Սեկագիայի Հայաստան այցի ավարտին հրատարակված հայտարարության տեքստը՝ <http://www.tert.am/am/news/2010/06/19/unreporter/>

<sup>12</sup> Freedom House «Nations in Transit 2009» <http://www.freedomhouse.hu/images/nit2009/armenia.pdf>

<sup>13</sup> <http://www.arlis.am/>

<sup>14</sup> ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը «Խոսքի ազատության իրավունքը ՀՀ-ում», հրապարակված 2010 թվականի հուլիսի 7-ին, գլուխ 1.9 <http://ombuds.am/main/am/10/31/>

տության մասին» ՀՀ օրենքը՝ փորձելով ապահովել քաղաքացիների տեղեկատվություն ստանալու իրավունքը: Մասնավորապես՝ վերջին 7 տարիների ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից նախաձեռնվել են ութ դատական գործեր ընդդեմ իշխանության տարբեր մարմինների՝ Վանաձորի քաղաքապետարանի, Ստեփանավանի քաղաքապետարանի, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ոստիկանության, ՀՀ հատուկ քննչական ծառայության՝ տեղեկատվություն տրամադրելու պահանջով: Այնուամենայնիվ, փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ դատարանի՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնող որոշման առկայության դեպքում կազմակերպությունը ստիպված է լինում դատարան դիմել նույն մարմնից երկրորդ անգամ այլ տեղեկատվություն ստանալու համար:

## Արդար դատաքննության իրավունք

Հայաստանի Հանրապետությունում չի ապահովվում արդար դատաքննության իրավունքը, քաղաքացիները չեն վստահում դատական համակարգին<sup>15</sup>: Արդար դատաքննության իրավունքի խախտումները պայմանավորված են ինչպես դատախազական համակարգից դատարանների կախվածությամբ, այնպես էլ օրենսդրական թերություններով<sup>16</sup>:

Հայաստանում դատական իշխանության անկախության մակարդակը, ըստ “Freedom House” կազմակերպության 2009 թվականի “Nations in Transit” զեկույցի<sup>17</sup>, վատթարացել է՝ 2007 թվականի 5.0 միավորի փոխարեն դառնալով 5.50 (1-7 գնահատման սանդղակով, որտեղ 1-ը ժողովրդավարական առաջընթացի առավելագույն աստիճանն է, իսկ 7-ը՝ նվազագույնը): Այսինքն՝ 2007 թվականին իրականացված դատական համակարգի բարեփոխումները չապահովեցին դատական իշխանության՝ որպես մարդու խախտված իրավունքների վերականգնման արդյունավետ ինստիտուտի կայացմանը, սահմանափակվեց քաղաքացիների՝ դատարանի մատչելիությունը:

2008-2010 թթ. Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերում իրականացված դատական մոնիթորինգների արդյունքները ցույց են տալիս, որ 71 դատական գործերի ընթացքում գրանցվել են դատավարական 179 խախտումներ: Խախտումներին նպաստող հանգամանք է հանդիսանում փաստաբանական ծառայության անմատչելիությունը, պետության կողմից տրամադրվող իրավական աջակցության սահմանափակ ծավալը, փաստաբանական ծառայության նկատմամբ արդյունավետ վերահսկողության բացակայությունը, դատավորների պատասխանատվության մեխանիզմի անկատարությունը<sup>18</sup>:

## Մտքի, խղճի և կրոնի ազատություն

Խղճի, կրոնի և համոզմունքների ազատությունը, հանդիսանալով որպես մարդու հիմնարար ազատություն և իրավունք, լուրջ մարտահրավերներ ունի Հայաստանի Հանրապետությունում: Չնայած ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված են և ճանաչված այդ ազատությունները՝ գործնականում և օրենսդրորեն չի ապահովվում պետության հավասար մոտեցումը կրոնական կազմակերպությունների նկատմամբ: Խտրական մոտեցումը ոչ առաքելական եկեղեցիների նկատմամբ արտահայտված է նախ և առաջ օրենսդրության մակարդակով: Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրությամբ Հայ Առաքելական եկեղեցին ճանաչվում է որպես ազգային եկեղեցի և նրա բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի

<sup>15</sup> Ազատություն ռադիոկայան, 25.12.2009 թ. «Արմեն Հարությունյանի գնահատմամբ, արդար դատաքննության իրավունքը Հայաստանում ապահովված չէ» <http://www.azatutyun.am/content/article/1913559.html>

<sup>16</sup> ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույց «Արդար դատաքննության իրավունքի ապահովումը Հայաստանի Հանրապետությունում» <http://www.ombuds.am/main/am/10/31/0/4/>

<sup>17</sup> “Freedom House” 2009 թվականի տարեկան զեկույց, “Nations in Transit” - Armenia <http://www.freedomhouse.org/uploads/nit/2009/Armenia-final.pdf>

<sup>18</sup> [www.hcav.am](http://www.hcav.am)

կյանքում:

Հանրակրթական դպրոցներում դասավանդվում է «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան, սակայն այդ առարկան դասավանդող ուսուցիչների որակավորման չափորոշիչները սահմանվում են Հայ Առաքելական եկեղեցու կողմից:

2007 թվականի ապրիլին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության և Հայ Առաքելական եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում են պետության և Հայ Առաքելական եկեղեցու առանձնահատուկ հարաբերությունները, վերջինիս տրվում են որոշակի արտոնություններ՝ ունենալ մշտական ներկայացուցիչներ հիվանդանոցներում, մանկատներում, զորամասերում, ազատագրված բոլոր վայրերում, մինչդեռ մյուս կրոնական կազմակերպությունները զրկված են նման արտոնություններից:

2004 թվականին գործողության մեջ մտավ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի՝ կրոնական և այլ հանգումունքներից ելնելով՝ քաղաքացիներն իրավունք ունեն գինվորական ծառայության փոխարեն անցնել ոչ մարտական գինվորական կամ աշխատանքային ծառայություն: Իրականում օրենքը չաշխատեց, քանի որ ապահովված չէր անհրաժեշտ մեխանիզմներով, արդյունքում 2010 թվականի հուլիսի դրությամբ առնվազն 90 քաղաքացիներ՝ «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության ներկայացուցիչներ, ենթարկվել են ազատագրված, քանի որ այլընտրանքային ծառայությունը իրականացվում է գինվորական հսկողության ներքո:

2009 թվականի մարտի 19-ին ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունվեց «Խղձի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրինագիծը, որի վերաբերյալ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի (Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ) կրոնի կամ հանգումունքի հարցերով խորհրդատվական խորհուրդը և Վենետիկի հանձնաժողովը խիստ քննադատական կարծիք ներկայացրեցին: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հիմնականում խղձի և հանգումունքների ազատության սահմանափակումների խախտումների վերաբերյալ տեղեկատվություն ստանում է Լոռու մարզի տարածքում:

Գործնականում խտրական վերաբերմունքը ոչ առաքելական կրոնական կազմակերպությունների նկատմամբ ավելի լայնորեն է դրսևորվում: Մասնավորապես՝ լրատվական միջոցներով, որպես կանոն, ոչ առաքելական եկեղեցիները գնահատվում են հակաազգային, օտար, աղանդավոր և այլն: Որպես խտրական վերաբերմունքի ցայտուն օրինակ է հանդիսանում 2010 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Վանաձորում Եհովայի վկաների աղոթատեղու կառուցման աշխատանքներին բնակիչների խոչընդոտման փաստը: Այս գործելակերպը պարբերաբար խրախուսվում է Հայ Առաքելական եկեղեցու պաշտոնատար անձանց կողմից: Միայն ՀՔԱ Վանաձորի գրասենյակի միջամտությունից հետո շինարարական աշխատանքները վերսկսվեցին և ընթացան առանց միջադեպերի:

Հիշեցնենք, որ դեռևս 2006 թվականին Եհովայի վկաների ներկայացուցիչների խախտված իրավունքների վերականգնման ուղղությամբ կազմակերպության գործունեության նկատմամբ «Հայ արիներ» կուսակցության Վանաձորի գրասենյակի մի խումբ երիտասարդների կողմից էլեկտրոնային փոստով տարածվեց սպառնալիք-նամակ: Ոչ առաքելական եկեղեցիների և նրանց ներկայացուցիչների նկատմամբ բացասական վերաբերմունքը պայմանավորված է հասարակական գործընթացներում նրանց ոչ լիարժեք մասնակցությամբ և ինքնամեկուսացմամբ<sup>19</sup>:

<sup>19</sup> Կրոնական կազմակերպությունների դերը հասարակական գործընթացներում  
[http://www.hcav.am/attachments\\_/5d20f\\_kronakan%5B1%5D.pdf](http://www.hcav.am/attachments_/5d20f_kronakan%5B1%5D.pdf)

## Խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք

1993 թվականին Հայաստանի Հանրապետությունը միացել է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին ՄԱԿ-ի կոնվենցիային, իսկ 2006 թվականին՝ կոնվենցիայի կամընտիր արձանագրությանը:

2001 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ եվրոպական կոնվենցիան, իսկ 2002 թվականին՝ կոնվենցիային կից թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները:

Թե՛ եվրոպական կոնվենցիայով, թե՛ ՄԱԿ-ի կոնվենցիային կից արձանագրություններով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է ձևավորել անկախ միջազգային և ազգային մարմիններ՝ ազատագրկման վայրեր կանոնավոր այցելություններ իրականացնելու համար:

Նշված կոնվենցիաներով և արձանագրություններով ազատագրկման վայրեր են դիտարկվում քրեակատարողական հիմնարկներն ու մարմինները, ոստիկանության ձերբակալվածների պահման վայրերը, խնամքի կենտրոնները՝ մանկատներ, ծերանոցներ, նյարդահոգեբուժական բուժհաստատություններ (փակ և կիսափակ այլ հաստատություններ):

2005 թվականից Հայաստանում գործում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդների խումբը, 2006 թվականից՝ ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդական խումբը: 2010 թվականին ձևավորվեց ՀՀ կրթության և գիտության նախարարության հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում մշտադիտարկում իրականացնող հասարակական դիտորդական խումբը:

Փակ և կիսափակ այլ հաստատություններում դիտորդական խմբեր դեռևս ձևավորված չեն:

2010 թվականին Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին կից ձևավորվել է 7 անձից բաղկացած դիտորդական խումբ՝ 3 փորձագետներ, 4 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնց նշանակում է մարդու իրավունքների պաշտպանը: Խումբն իրավունք ունի անարգել մուտք գործել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր փակ և կիսափակ հաստատությունները՝ քրեակատարողական հիմնարկներ, ոստիկանություն, ոստիկանության ձերբակալվածների պահման վայրեր, մանկատներ, երեխաների ցերեկային խնամքի կենտրոններ, հատուկ դպրոցներ, ծերանոցներ, հոգեբուժարաններ, զորամասեր:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը հանդիսանում է քրեակատարողական հիմնարկների դիտորդական խմբի անդամ, մարդու իրավունքների պաշտպանին կից գործող խմբի անդամ, հատուկ կրթական հաստատություններում մշտադիտարկում իրականացնող խմբի անդամ:

## Ոստիկանություն

Հայաստանում իրավապահ համակարգի և մասնավորապես ՀՀ ոստիկանության գործունեությունը դեռևս կրում է խորհրդային ժամանակների գործելաձևի ազդեցությունը: Սա է պատճառը, որ հասարակության կողմից ոստիկանության գործունեությունը գնահատվում է ոչ թափանցիկ, և ոստիկանության նկատմամբ հասարակությունը վստահություն չի դրսևորում<sup>20</sup>:

2009 թվականի հոկտեմբերին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Լոռու մարզի ոստիկանության բաժանմունքներում իրականացված մոնիթորինգի արդյուն-

<sup>20</sup> John Smith Memorial Trust հետազոտության արդյունքներ

<http://www.johnsmithmemorialtrust.org/web/site/Articles&News/FellowsArticles/Hovakimyan.asp>

քում արձանագրվեց, որ բացակայում է ոստիկանության բաժանմունքների գործունեության վերաբերյալ քաղաքացիների առջև հաշվետվողականության ինստիտուտը<sup>21</sup>:

Նույն մոնիթորինգի արդյունքները ցույց տվեցին նաև, որ ոստիկանությունը դեռևս կայացած չէ որպես մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովող և հասարակությանը ծառայություն մատուցող կառույց:

Նման խնդիրների առկայությունը պրակտիկայում մեկուսացնում է իրավապահ համակարգի գործունեությունը հասարակությունից, պայմաններ ստեղծում վերջիններիս կողմից իրավախախտումների, չարաշահման, վատ վերաբերմունքի և ոստիկանության աշխատակիցների անպատժելիության տարածման համար: Սրա մասին են վկայում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2008-2010 թվականների ընթացքում Լոռու մարզում ոստիկանության աշխատակիցների կողմից դրսևորված վատ վերաբերմունքի փաստերը:

Վատ վերաբերմունքի 14 փաստերից ոչ մեկի կապակցությամբ ոստիկանության աշխատակիցները պատասխանատվության չեն ենթարկվել<sup>22</sup>:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ տեղափոխված անձանց արտաքին զննությամբ բացահայտված մարմնական վնասվածքների բազմաթիվ փաստեր են արձանագրվել ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ներկայացուցչի կողմից խմբի կազմում այցելությունների ժամանակ:

2010 թվականին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը դիմել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ տեղեկատվություն խնդրելով ոստիկանության բաժանմունքներից քրեակատարողական հիմնարկներ մարմնական վնասվածքներով մուտք գործած անձանց, այդ փաստերի առթիվ քրեակատարողական հիմնարկների կողմից ներկայացված հաղորդումների թվի և ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ: Դատախազությունը պատասխանել է, որ նման տեղեկատվությանը չի տիրապետում և խորհուրդ է տվել դիմել ոստիկանություն: Սակայն ոստիկանությունը ևս նման տեղեկատվություն չի տրամադրել՝ պատասխանելով, որ նման հաշվառում չի իրականացվում:

Ավելին՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությունն ամեն կերպ փորձում է խոչընդոտել արձանագրված փաստերի ուղղությամբ իրականացված արդյունավետ հետաքննությանը: Օրինակ՝ կազմակերպությանը չի տրամադրում ներկայացված հաղորդման կապակցությամբ հարուցված քրեական գործի վերաբերյալ որոշումը կամ ծառայողական քննության արդյունքները: Կազմակերպությունը ստիպված է լինում դիմել դատարան՝ քրեական գործ հարուցելուն պարտավորեցնելու պահանջով:

2010 թվականին ոստիկանության բաժանմունքներում դրսևորվող վատ վերաբերմունքի ամենացայտուն վկայությունը Չարենցավանի ոստիկանության բաժանմունքում քաղաքացի Վահան Խալաֆյանի սպանության փաստն էր, որի կապակցությամբ իր մտահոգությունը հայտնեց նաև Human Rights Watch իրավապաշտպան կազմակերպությունը: ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված իր նամակում կազմակերպությունը նշել է. «Կան մտահոգություններ, որ մահվանից առաջ նա ենթարկվել է վատ վերաբերմունքի»<sup>23</sup>:

2009 թվականի հաշվետվության մեջ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում դիտորդություն իրականացնող խումբն իր մտահոգությունն է արտահայտել ձերբակալվածների տեսակցության, բուժզննության և բուժօգնության, սննդի, զբոսանքի կազմակերպման խնդիրների կապակցությամբ: Մասնավորապես՝ խումբը նշել է, որ ոստիկանության վարչակազմի կողմից ձերբա-

<sup>21</sup> Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի «2009 թ-ի հոկտեմբերի 29-ին Լոռու մարզի ոստիկանության վարչության 6 բաժիններում իրականացված դիտարկումների և բացահայտված խնդիրների վերաբերյալ հաշվետվություն», Եզրակացություն բաժին [http://www.hcav.am/attachments\\_/921ce\\_Hashvetvutyun.pdf](http://www.hcav.am/attachments_/921ce_Hashvetvutyun.pdf)

<sup>22</sup> Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի «Լոռու մարզում արձանագրված խոշտանգումների մասին» հաշվետվություն [http://www.hcav.am/attachments\\_/dc694\\_Xoshtangumner.pdf](http://www.hcav.am/attachments_/dc694_Xoshtangumner.pdf)

<sup>23</sup> [http://www.hcav.am/articles.php/language\\_arm/date\\_2010-04-28/article\\_3611/Human\\_Rights\\_Watch\\_letter\\_addressed\\_to\\_RA\\_Prosecutor\\_General.html](http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2010-04-28/article_3611/Human_Rights_Watch_letter_addressed_to_RA_Prosecutor_General.html)

կալված անձանց արգելվում է տեսակցությունը (դիտորդական խմբի թեժ հեռախոսազանգին ուղղված բողոքների 80%-ը եղել է տեսակցություն տրամադրելու մասին):

Թեև օրենքով նախատեսվում է երեքանգամյա սննդի ապահովում, ձերբակալված անձանց պահելու վայրերում սնունդ տրվում է հիմնականում մեկ անգամ:

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ անձին բուժզննության ենթարկել ձերբակալելուց անմիջապես հետո: Անձի բուժզննությունը կատարվում է միայն այն դեպքում, երբ նրա մոտ հայտնաբերվում է մարմնական վնասվածք: Դիտորդական խումբը նշել է, որ նույնիսկ մարմնական վնասվածքներ հայտնաբերելու պարագայում, 11 ՁՊՎ-ներից միայն 1-ում է, որ կատարվում է բուժզննություն և համապատասխան գրառում<sup>24</sup>:

2010-2011 թվականների ՀՀ կառավարության բարեփոխումների ծրագրի հայեցակարգի համաձայն՝ հանրապետությունում նախատեսվում են ոստիկանության համակարգի գործունեության բարեփոխումներ, որոնց վերջնապատակը պետք է լինի այն, որ քաղաքացիները զգան իրենց ավելի անվտանգ և վստահեն ոստիկանությանը<sup>25</sup>:

## **Քրեակատարողական հիմնարկներ**

2009 թվականին հրապարակված «ՀՀ Արդարադատության քրեակատարողական համակարգը 2008 թվականին» հաշվետվության մեջ հասարակական դիտորդական խումբը անդրադարձել է քրեակատարողական հիմնարկների ընդհանուր պայմաններին, կալանավորված անձանց նկատմամբ վերաբերմունքին, կալանավորված անձանց իրավունքների ապահովմանը: Խումբն իր մտահոգությունն է հայտնել քրեակատարողական հիմնարկների գերբնակեցվածության կապակցությամբ՝ գտնելով, որ դատապարտյալների պահման հանրակացարանային պայմանները հակասում են թե՛ միջազգային չափանիշներին, թե՛ ՀՀ քրեակատարողական օրենսգրքին:

Դիտորդների կողմից բացահայտված վատ վերաբերմունքի դեպքերում չեն գրանցվում հատուկ միջոցների կիրառման դեպքերը (ձեռնաշղթաներ, մահակներ և այլն), իսկ անձնակազմը չի գրանցում ազատագրվածների ստացած վնասվածքները<sup>26</sup>: Այս մտահոգությունն է արտահայտել նաև Խոշտան-գունների կանխարգելման կոմիտեն իր 2006 թվականի զեկույցում<sup>27</sup>:

## **Նյարդահոգեբուժական բուժհաստատություններ**

2009 թվականին Հայաստանում գործող 8 նյարդահոգեբուժական բուժհաստատություններում իրականացված մարդու իրավունքների մոնիթորինգի արդյունքում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը խիստ մտահոգություն է հայտնել բուժհաստատությունների շենքային, սանիտարահիգիենիկ պայմանների, սննդի, նյարդահոգեբուժական բուժհաստատություններում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ<sup>28</sup>: Մասնավորապես՝ օրենսդրությամբ սահմանված չեն նյարդահոգեբուժական բուժհաստատություններում գտնվող անձանց սննդի, սանիտարահիգիենիկ պայմանների, վարվեցողության նվազագույն չափորոշիչներ:

<sup>24</sup> ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի «Հաշվետվություն» 2009, էջ 132-148 <http://www.policemonitoring.org/index.php?m=45>

<sup>25</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=47152>

<sup>26</sup> ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական դիտորդական խմբի «ՀՀ քրեակատարողական համակարգը 2008 թվականին» հաշվետվություն, 2008թ [http://www.hra.am/documents/PMG\\_Report\\_2008\\_arm.pdf](http://www.hra.am/documents/PMG_Report_2008_arm.pdf)

<sup>27</sup> Հաշվետվություն ՀՀ Կառավարությանը Հայաստան այցելության վերաբերյալ <http://www.cpt.coe.int/documents/arm/2007-47-inf-eng.htm>

<sup>28</sup> [http://www.hcav.am/articles.php/language\\_arm/date\\_2009-10-27/article\\_3321/page.html](http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2009-10-27/article_3321/page.html)

Թեև «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքով սահմանված են նյարդահոգեբուժական բուժհաստատություններում արտաքին աշխարհի հետ հաղորդակցման, զբոսանքի, իրավական աջակցության իրավունքները, այնուամենայնիվ չի ապահովվում դրանց իրականացումը:

Մտահոգիչ խնդիրներ են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հարկադիր բուժման, ֆիզիկական զսպման միջոցների կիրառման հետ կապված մարդու իրավունքների խախտումները, որոնք հետևանք են նաև օրենսդրական բացերի:

Մտահոգություն է առաջացնում դեղորայքի մատակարարումը և բուժսպասարկումը՝ նյարդահոգեբուժական բուժհաստատություններում հիմնականում իրականացվում է դեղորայքային բուժում, և խնդիրներ են առաջացնում մատակարարվող դեղորայքի որակը, դեղորայքի տրամադրման չափաբաժինները: Չկա պացիենտների նկատմամբ անհատական մոտեցում՝ բուժման անհատական ծրագիր և թերապիա:

Հայաստանում քրոնիկ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բուժսպասարկումն իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ նույն բուժհաստատություններում, նույն բաժանմունքներում, և չեն գործում խնամքի կենտրոններ քրոնիկ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար:

Հոգեբուժության ոլորտում բացակայում է կանխարգելիչ քաղաքականությունը, իսկ բուժում ստանալուց հետո պացիենտի նկատմամբ արտահիվանդանոցային արդյունավետ բժշկական հսկողություն չի իրականացվում:

Նյարդահոգեբուժական բուժհաստատություններում միջին աշխատակազմը՝ սանիտարները և բուժքույրերը, մասնագիտացված չեն: Նրանց համար մասնագիտական վերապատրաստման պարբերական դասընթացներ չեն կազմակերպվում: Բացակայում են աշխատակազմի աշխատանքային համապատասխան պայմանները՝ իրականացվող աշխատանքին համարժեք վճարներ, 24-ժամյա աշխատանքի ընթացքում համապատասխան հանգիստ և աշխատանքային սոցիալական արտոնություններ և այլն:

Պացիենտների նկատմամբ աշխատակազմը դրսևորում է ֆիզիկական բռնություններ, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք՝ գրեթե բոլոր բուժհաստատություններում պացիենտները ներգրավված են ֆիզիկական բնույթի աշխատանքներում:

## **Զինված ուժեր**

2009 թվականին 11 ամսում զինդատախազության տվյալներով բանակում 42 մահվան դեպք է եղել<sup>29</sup>: Բանակում սպանությունների վերաբերյալ տվյալները, որպես կանոն, ամբողջական չեն ներկայացվում:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության բացակայության արդյունքում սպանությունների թվի, պատճառների վերաբերյալ տեղեկատվությունը սահմանափակվում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ պաշտպանության նախարարի հրամաններով: Ներկայումս Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը դիմում է ներկայացրել դատարան՝ ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ բանակում սպանված զինծառայողների թիվը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջով:

Զինված ուժերում սպանությունների արդյունավետ, օբյեկտիվ և համակողմանի քննություն չի իրականացվում սպանությունների բացահայտման և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Դրա վառ օրինակ է հանդիսանում Մատաղիսի գործը՝ բանակում 2 զինվորների մահվան փաստը, որի դատաքննությունը շարունակվում է մինչ օրս<sup>30</sup>:

Կազմակերպության կողմից 2010 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսներին էլեկտրոնային մանուլի տվյալների ուսումնասիրությամբ բանակում արձանագրվել է զինվորների սպանության ավելի

<sup>29</sup> <http://www.tert.am/blog/?p=1216>

<sup>30</sup> [http://khosq.com/article/2008/07/03/mataghisi\\_gortci\\_hakaphastark](http://khosq.com/article/2008/07/03/mataghisi_gortci_hakaphastark), [http://khosq.com/en-us/article/2008/07/03/mataghisi\\_gortci\\_hama%D5%BCot\\_teghekanqe](http://khosq.com/en-us/article/2008/07/03/mataghisi_gortci_hama%D5%BCot_teghekanqe)



քան 10 դեպք<sup>31</sup> (ընդ որում միայն հուլիս ամսին 2 օրվա ընթացքում 7 սպանության դեպք): Նշված դեպքերը պաշտոնական նախաքննությունը ներկայացնում է որպես ինքնասպանություններ կամ համաժառանգողների կողմից իրականացված սպանություններ: Մինչդեռ, սպանվածների հարազատները սպանության հանգամանքների վերաբերյալ ունեն այլ փաստեր<sup>32</sup>:

ՀՀ պաշտպանության նախարարությունը շարունակում է զինված ուժերում կատարվող իրադարձությունների վերաբերյալ հանրությանը ապատեղեկացնելու և զինվորական հանցագործությունների կանխարգելելու անարդյունավետ գործելակերպը:

## **Փակ և կիսափակ հաստատություններ**

2007-2010 թվականների ընթացքում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Վանաձորի մանկատանը, Վանաձորի ծերատանը, «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում և Լոռու մարզային հոգեոնյարդաբանական դիսպանսերում իրականացված մարդու իրավունքների ճնշող ճնշումների արդյունքում բացահայտված խնդիրները պայմանավորված են ինչպես օրենսդրական բացերով, այնպես էլ պրակտիկայում առկա համակարգային խնդիրներով: Մտահոգիչ է, որ պետությունը չի ապահովում օրենսդրությամբ սահմանված չափորոշիչներին համապատասխան ֆինանսական հատկացումները: Սրա հետևանքով գրեթե բոլոր հաստատություններում առկա են սննդի կալորիականության և բազմազանության, անհրաժեշտ հագուստի, սանիտարահիգիենիկ պարագաների, շենքային և կենցաղային պայմանների խնդիրներ<sup>33</sup>: Առկա խնդիրների մի մասն էլ պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված հաստատություններում սննդի, սանիտարահիգիենիկ և այլ պայմանների, անձնակազմի վերաբերմունքի չափորոշիչներ, ինչպես նաև աշխատանքի նկարագրեր սահմանված չեն կամ թերի են:

Աշխատակազմի կողմից կիրառվում են պատժի և պատասխանատվության այնպիսի միջոցներ, որոնք իրենց բնույթով հանդիսանում են բռնություն և բնութագրվում որպես դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք:

Աշխատակազմի կողմից շահառուների իրավունքների և պարտականությունների մասին համաձայնեցված իրազեկում պատշաճ կարգով չի իրականացվում:

## **Սոցիալական իրավունքներ**

2004 թվականին Հայաստանի Հանրապետությունը որոշակի վերապահումներով վավերացրել է Եվրոպական սոցիալական խարտիան:

2008 թվականին Հայաստանի Հանրապետությունը սոցիալական իրավունքի եվրոպական կոմիտեին ներկայացրել է զեկույց խարտիայի 7 հոդվածների վերաբերյալ՝ աշխատանքի, մասնագիտական ուղղվածության իրավունքի, մասնագիտական ուսուցման իրավունքի, հաշմանդամների անկախության սոցիալական ինտեգրման, համայնքի կյանքում մասնակցության իրավունքի, մյուս կողմերի տարածքում վճարովի աշխատանքով զբաղվելու իրավունքի, առանց սեռական խտրականության աշխատանքի և մասնագիտական հարցերում հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքի, աշխատանքից ազատվելու դեպքում՝ պաշտպանվածության իրավունքի, իրենց գործա-

<sup>31</sup> <http://www.armtimes.com/15893>, <http://www.armtimes.com/15910>, <http://www.armtimes.com/16041>, <http://www.armtimes.com/16059>, <http://www.armtimes.com/16060>

<sup>32</sup> <http://www.armtimes.com/15910>, <http://www.zhamanak.com/article/15778/>

<sup>33</sup> Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի «Մարդու իրավունքների վիճակը Լոռու մարզում» 2007, 2008 թվականների զեկույցներ [http://www.hcav.am/attachments\\_/01232\\_zekuyc\\_2009.07.01%5B1%5D-arm.PDF](http://www.hcav.am/attachments_/01232_zekuyc_2009.07.01%5B1%5D-arm.PDF), [http://www.hcav.am/attachments\\_/dcdfc\\_MON\\_1%5B1%5D.pdf](http://www.hcav.am/attachments_/dcdfc_MON_1%5B1%5D.pdf)

տուհի անվճարունակության դեպքում՝ իրենց հայցերի պաշտպանվածության՝ աշխատողների իրավունքի իրականացման վերաբերյալ:

Ձեկույցի պատրաստմանը ՀՀ կառավարությունը հասարակական կազմակերպություններին մասնակից չի դարձրել, ավելին, որևէ տեղեկություն ներկայացվելիք զեկույցի վերաբերյալ չի հրապարակվել:

Սոցիալական խարտիայի արձանագրությունը, որը նախատեսում է կոլեկտիվ բողոքներ ներկայացնելու համակարգ, Հայաստանի Հանրապետությունը չի վավերացրել, և փաստորեն սոցիալական իրավունքների առանձին խախտումների վերաբերյալ, բացի ՀՀ կառավարության կողմից տրամադրված տեղեկությանը, կոմիտեն բողոքներ չի ստացել, քանի որ ՀՀ քաղաքացիներն այդ երաշխիքից օգտվել չեն կարող:

Ներկայացված զեկույցի կապակցությամբ Կոմիտեն եզրակացրել է<sup>34</sup>, որ ընդհանուր առմամբ, Հայաստանում իրավիճակը համահունչ է խարտիայի պահանջներին, մասնագիտացված ուղղվածության իրավունքի, մյուս կողմերի տարածքում վճարովի աշխատանքով զբաղվելու իրավունքների վերաբերյալ եզրակացությունը հետաձգվել է՝ պետության կողմից ակնկալելով հավելյալ տեղեկատվություն:

2009 թվականի հոկտեմբերի 31-ին Հայաստանի Հանրապետությունը զեկույց է ներկայացրել անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների իրավունքի, սոցիալական ապահովության իրավունքի, բժշկական և սոցիալական օգնության իրավունքի, սոցիալական ապահովության ծառայությունից օգտվելու իրավունքի վերաբերյալ, թեև պարտավորվել էր զեկույցի մեջ ներառել նաև առողջության պաշտպանվածության իրավունքի, տարեց մարդկանց սոցիալական պաշտպանվածության իրավունքի, աղքատությունից և սոցիալական անարդարությունից պաշտպանվածության իրավունքի վերաբերյալ:

Ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Կոմիտեն եզրակացրել է, որ բժշկական և սոցիալական օգնության իրավունքը, սոցիալական ապահովության իրավունքը չեն համապատասխանում Խարտիայի պահանջներին, անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների իրավունքի, սոցիալական ապահովության ծառայություններից օգտվելու իրավունքի վերաբերյալ եզրակացությունը հետաձգվել է՝ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու ակնկալիքով<sup>35</sup>:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերում իրականացված հարցման արդյունքները ցույց են տվել, որ հիվանդությունների 54%-ի դեպքում տրվել է սխալ ախտորոշում, իսկ 20%-ի դեպքում իրականացվել է սխալ բուժում:

Շտապ օգնության տրամադրման 44%-ի դեպքում քաղաքացիները իրականացրել են վճարումներ, թեև շտապ օգնությունն անվճար է: Շտապ օգնության տրամադրման 45%-ի դեպքում այն եղել է առանց բժշկի մասնակցության:

## **Պացիենտների իրավունքներ**

Սոցիալական իրավունքների շարքում առանձին խնդիր է դիտարկվում պացիենտների իրավունքների պաշտպանությունը: Վերջիններիս ցանկում ներառված են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, թմրամիջոց գործածողները, ալկոհոլից կախվածություն ունեցող, քրեակատարողական հիմնարկներում գտնվող, պալիատիվ օգնության կարիք ունեցող անձինք:

2002 թվականին Հայաստանի Հանրապետությունը միացել է Պացիենտների իրավունքների եվրոպական խարտիային: Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 2007-2010 թվականներին թմրամիջոց գործածող անձանց իրավական պաշտպանության շրջանակնե-

<sup>34</sup> Սոցիալական իրավունքի եվրոպական կոմիտեի եզրակացություններ 2008 թ. [www.coe.int/socialcharter](http://www.coe.int/socialcharter)

<sup>35</sup> Սոցիալական իրավունքի եվրոպական կոմիտեի եզրակացություններ 2009 թվականի

[http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/conclusions/State/Armenia2009\\_en.pdf](http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/conclusions/State/Armenia2009_en.pdf)

րում հանգեց այն եզրակացությանը, որ թմրամիջոց գործածողների արդար դատաքննության իրավունքի խախտումները հիմնականում պայմանավորված են նրանց՝ որպես պացիենտների իրավունքների խախտմամբ<sup>36</sup>: Բացի այդ, պացիենտների իրավունքների պաշտպանության դատական պրակտիկան զարգացած է, և այդ ուղղությամբ փաստաբանական կարողությունները դեռևս թույլ են զարգացած:

Թեև Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է վերջիններիս անվճար բուժսպասարկումը, թմրամիջոց գործածողները խուսափում են օգտվել բուժսպասարկումից: Հիվանդանոց դիմելուց հետո նրանց վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ կառավարության որոշմամբ տրամադրվում է ոստիկանությանը, որն էլ այնուհետև հետապնդումներ է իրականացնում նրանց նկատմամբ: Բացի այդ, թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ քրեական գործ հարուցելուց հետո նախաքննության մարմինը ստորագրությամբ վերջիններիս բաց թողնելու դեպքում իր մոտ պահում է նրանց անձնագիրը, իսկ բուժսպասարկման համար պարտադիր պայման է անձը հաստատող փաստաթղթի առկայությունը:

Բուժման արդյունավետության վրա զգալի ազդեցություն ունի դեղորայքի որակը: Ներկայումս Հայաստանը չի ներկրում արդյունավետ բուժման համար միջազգային պրակտիկայում ընդունվող դեղորայքը, վերականգնողական բուժում չի իրականացվում:

2009 թվականից Հայաստանում «Հակաթմրամուլային քաղաքացիական դաշինք<sup>37</sup>» հասարակական կազմակերպության և Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվում է մեթադոնային փոխարինիչ բուժման ծրագիր միայն Երևան քաղաքում, որը սակայն հանդիպում է լուրջ խոչընդոտների ոստիկանության կողմից:

## Կառավարում, վարչարարություն և կոռուպցիա

Թեև Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է կառավարման ժողովրդավարական սկզբունքները, այնուամենայնիվ մնում են չհաղթահարված ավտորիտար մոտեցումները և գործելակերպը օրենսդրության կիրառման մակարդակում:

Վարչարարության իրականացման ընթացակարգերը չեն նպաստում մարդու իրավունքների իրականացման ապահովմանը:

Վարչարարության ոլորտի օրենսդրության սկզբունքների իրականացման դրույթների անհստակությունը, թերությունները հանգեցնում են անարդյունավետ վարչարարության իրականացման, որի հետևանքով խախտվում են մարդու իրավունքները:

Չնայած ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը՝ Թրանսփարենսի ինթերնեյշնլ կազմակերպության զեկույցի համաձայն՝ Հայաստանում կոռուպցիայի տարածվածության մակարդակն աճել է: 2009 թվականին այն գնահատվել է 2.7 միավոր<sup>38</sup>, որը մոտ 0.5 միավորի նահանջ է 2003 թվականի ցուցիչի համեմատությամբ<sup>39</sup> և 0.3 միավորի՝ 2007 թվականի համեմատությամբ<sup>40</sup>:

Ըստ «Կոռուպցիայի ընկալման համաթիվը» հետազոտության 3 և ցածր գնահատականը բնորոշ է համակարգային կոռուպցիա ունեցող երկրներին, որտեղ իշխում է ոչ թափանցիկ գործելաոճը, հանրային հաստատությունները դեռևս կարիք ունեն ամրապնդման, իսկ կառավարությունները չեն իրականացնում իրական հակակոռուպցիոն բարեփոխումներ:

<sup>36</sup> [www.hcav.am](http://www.hcav.am)

<sup>37</sup> <http://shneck.com/1220827.html>

<sup>38</sup> Transparency International կազմակերպության 2009 թվականի տարեկան զեկույց [http://www.transparency.org/publications/publications/annual\\_reports/ti\\_ar2009](http://www.transparency.org/publications/publications/annual_reports/ti_ar2009)

<sup>39</sup> Transparency International կազմակերպության 2003 թվականի տարեկան զեկույց [http://www.transparency.org/publications/publications/annual\\_reports/annual\\_report\\_2003](http://www.transparency.org/publications/publications/annual_reports/annual_report_2003)

<sup>40</sup> Transparency International կազմակերպության 2007 թվականի տարեկան զեկույց [http://www.transparency.org/publications/publications/annual\\_reports/annual\\_report\\_2007](http://www.transparency.org/publications/publications/annual_reports/annual_report_2007)

Բերթելսման հիմնադրամի 2010 թվականի զեկույցում նշվում է, որ քաղաքական կոռուպցիայի դրսևորումների հետևանքով տնտեսական մրցակցության խոցելի միջավայրը շարունակաբար խոչընդոտում է Հայաստանի հետագա տնտեսական զարգացմանը<sup>41</sup>:

2008-2010 թթ. կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի Լոռու մարզի շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնի փորձը ցույց է տվել, որ կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքական կամքի բացակայությունը չի նպաստում կոռուպցիոն երևույթների նվազեցմանը: Լոռու մարզի շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնի վերջին 2 տարիների գործունեության ընթացքում կոռուպցիոն ռիսկերի հիման վրա ներկայացվել են 25 հաղորդումներ: Դրանցից քրեական գործ է հարուցվել միայն պաշտոնատար անձանց երկու կոռուպցիոն գործողությունների կապակցությամբ, սակայն վերջիններս համաներման ակտի կիրառման արդյունքում պատասխանատվության չեն ենթարկվել:

Քրեական գործ չհարուցելու ավելի քան 5 որոշում բողոքարկվել է դատական կարգով: Ներկայումս 13 դատական գործ դեռևս գտնվում է տարբեր դատական ատյաններում՝ դատաքննության փուլում: Կազմակերպության փորձի հիման վրա կարելի է եզրակացնել, որ կոռուպցիոն հանցագործություններով դատական գործերը միջինը տևում են 10-17 ամիս, ինչի հետևանքով պայքարի արդյունավետությունը զգալիորեն նվազում է:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից Լոռու մարզի Վանաձոր, Ալավերդի, Տաշիր համայնքների ղեկավարի և ավագանու 408 որոշումների վերլուծությունը ցույց է տվել, որ դրանցից 377-ը պարունակել է կոռուպցիոն ռիսկեր, իսկ 394-ը՝ ընթացակարգային խախտումներ (մի շարք որոշումներ միաժամանակ պարունակել են թե՛ կոռուպցիոն ռիսկեր, թե՛ ընթացակարգային խախտումներ):

## **Տեղական ինքնակառավարման մարմիններ**

2001 թվականին Հայաստանը վավերացրել է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան, որով տեղական ինքնակառավարումը սահմանվում է որպես ժողովրդավարական ինստիտուտների հիմքերից մեկը, ձևաչափում է քաղաքացիների իրավունքը պետական գործերի կառավարման և հատկապես տեղական մակարդակում:

Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բավարար հնարավորություններ չի նախատեսում տեղական մակարդակում կայացվող որոշումների գործընթացում հանրային մասնակցության ապահովման համար<sup>42</sup>: Այս տեսակետից կարևոր է «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի նշանակությունը՝ որպես համայնքի բնակիչների կողմից համայնքային նշանակության խնդիրների լուծման մեխանիզմ, որը սակայն դեռևս լիարժեք չի գործում: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցների և համայնքի բնակիչների կողմից նախաձեռնվեց Վանաձորի քաղաքապետին անվստահություն հայտնելու նպատակով տեղական հանրաքվեի անցկացման փորձ, սակայն ՀՀ սահմանադրական դատարանի կողմից այն ձանաչվեց ոչ օրինաչափ<sup>43</sup>:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից 2009 թվականին Լոռու մարզի 5 քաղաքներում ավագանու կողմից ընդունվող որոշումների գործընթացի արդյունքները ցույց են տալիս, որ համայնքի բնակչությունը տեղական խնդիրների լուծմանը համայնքի սեփականության և բյուջեի տնօրինման գործին գրեթե չի մասնակցում<sup>44</sup>:

<sup>41</sup> Bertelsmann Stiftung, BTI 2010 - Armenia Country

[http://www.bertelsmann-transformation-index.de/fileadmin/pdf/Gutachten\\_BTI2010/CIS/Armenia.pdf](http://www.bertelsmann-transformation-index.de/fileadmin/pdf/Gutachten_BTI2010/CIS/Armenia.pdf)

<sup>42</sup> Local Governments in Eastern Europe, in the Caucasus and Central Asia “Local government in Armenia” Chapter 6  
<http://lgi.osi.hu/publications/2001/84/Ch6-Armenia.pdf>

<sup>43</sup> [http://www.hcav.am/articles.php/language\\_arm/date\\_2007-03-31/article\\_949/Local\\_Impeachment\\_in\\_Vanadzor.html](http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2007-03-31/article_949/Local_Impeachment_in_Vanadzor.html)

<sup>44</sup> www.hcav.am

«Սպիտակի հելսինկյան խումբ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից 2010 թվականին Սպիտակ համայնքի չափահաս բնակիչների շրջանում իրականացված հարցման արդյունքները ցույց են տվել, որ բնակիչների մասնակցության բացակայության հիմնական պատճառը համայնքի ավագանու նիստերի և դրանց մասնակցելու հնարավորության մասին տեղեկատվության բացակայությունն է, բնակչությունը ծանոթ չէ տեղական ինքնակառավարման մասին օրենսդրությանը:

Բնակչության մեծ մասը չի վստահում տեղական ինքնակառավարման մարմիններին, չնայած համայնքի ղեկավարի գործունեությունը գնահատում է բավարար: Նույնը չի կարելի ասել համայնքի ավագանու գործունեության մասին<sup>45</sup>: Համայնքի բնակչության 73%-ը տեղյակ չէ ավագանու գործունեությանը, հիմնական պարտականություններին: Սա վկայում է այն մասին, որ համայնքի ավագանու ինստիտուտը կայացած չէ, ավագանին ամբողջությամբ չի իրականացնում օրենքով վերապահված իր լիազորությունները:

Համայնքի բնակիչների համար դեռևս անհասկանալի է, թե ինչ չափով և ինչ կերպ է տեղական բյուջեի պլանավորումն իրականացվում համայնքի բնակիչների և համայնքի խնդիրների հիման վրա:

## Խաղաղասիրություն

Եվրախորհրդին անդամակցելիս թե՛ Հայաստանը, թե՛ Ադրբեջանը պարտավորություն են ստանձնել դարաբառյան կոնֆլիկտը լուծել խաղաղ ձևապարհով, միաժամանակ պարտավորվել են աջակցել քաղաքացիական հասարակության ինստիտուտների մասնակցությանը կոնֆլիկտի կարգավորման գործընթացներին:

Չնայած վերցրած պարտավորություններին, հակամարտող կողմերի հասարակությունների ներկայացուցիչների միջև համագործակցությունը ոչ միայն չի ստանում անհրաժեշտ աջակցություն իշխանությունների կողմից, այլև խոչընդոտվում է: Որպես օրինակ կարելի է նշել 2006 թվականին ՀԲԱ Վանաձորի գրասենյակի կողմից Գուգարք ձամբարում կազմակերպված «Փոխվստահության ձամբարի» ադրբեջանցի երիտասարդ մասնակիցների նկատմամբ զանգվածային լրատվամիջոցներով ձնշումները և վերջիններիս բնութագրումը որպես դավաճանների: 2010 թվականին կազմակերպության կողմից իրականացվող «Երիտասարդ իրավապաշտպանների ցանցի ձևավորում և ուսուցում» ծրագրում (ֆինանսավորված Ժողովրդավարության աջակցության ազգային ֆոնդ հիմնադրամի կողմից) Ադրբեջանի և Աբխազիայի ներկայացուցիչները չմասնակցեցին, որը պայմանավորված էր ծրագրի վերաբերյալ ադրբեջանական և արբխազական լրատվամիջոցներում բացասական հոդվածներով և մեկնաբանություններով<sup>46</sup>:

Խաղաղասիրական գործունեության օրակարգում շարունակում է մնալ կոնֆլիկտից տուժածների՝ անհայտ կորածների և նրանց ընտանիքների, նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների, փախստականների և ներքին տեղահանվածների բազմաթիվ խնդիրների չլուծվածությունը<sup>47</sup>:

Այս տեսակետից նշենք, որ իշխանությունները բավարար կամք և հետևողականություն չեն դրսևորում կոնֆլիկտից տուժածների խնդիրների լուծման ուղղությամբ, մասնավորապես՝ միայն 2010 թվականին ՀՀ կառավարությունը նախաձեռնեց «Անհայտ կորածի մասին» օրենքի նախագծի մշակման աշխատանքները: Ադրբեջանում նմանատիպ օրենքը նույնպես միայն 2010 թվականի գարնանը ներառվեց Միլիմեջլիսի օրակարգ:

Ավելի քան 15 տարի եԱՀԿ Մինսկի խմբի կողմից դարաբառյան կոնֆլիկտի խաղաղ կարգավորման բանակցություններին զուգահեռ ոչ թե նվազել, այլ ավելացել են խաղաղ կարգավորման հնարա-

<sup>45</sup> [www.hcav.am](http://www.hcav.am)

<sup>46</sup> <http://www.lidertv.com/az/news/0/105588.html>

<http://pia.az/index.php?l=az&m=news&id=379>

<http://www.kr-eho.info/index.php?name=News&op=article&sid=4308&word=%D5%C3%0>

<http://www.golosarmenii.am/ru/19986/politics/3600/>

<http://v102.ru/politics/19565.html> <http://www.abkhaziagov.org/ru/president/press/inosmi/detail.php?ID=30929>

<sup>47</sup> [http://www.hcav.am/attachments\\_/7167f\\_youth\\_main\\_arm.pdf](http://www.hcav.am/attachments_/7167f_youth_main_arm.pdf)

վորությանը սպառնացող գործոնները: Առավել մտահոգիչ է Հայաստանի և Ադրբեջանի պաշտպանության բյուջեների մշտական աճը հատկապես 2000-2010 թվականների ընթացքում (տե՛ս նկարը, <http://milexdata.sipri.org/result.php4>):

Տարածաշրջանում կոնֆլիկտների խաղաղ կարգավորման վրա խիստ բացասական ազդեցություն ունեցավ վրաց-ռուսական կարճաժամկետ պատերազմը 2010 թվականի օգոստոսին: Հայաստանում ռուսական բազաների տեղակայման ժամկետի երկարացումը մինչև 2044 թվականը նույնպես հանգեցնում է տարածաշրջանում ռազմականացման մակարդակի բարձրացմանը: Այս առումով օրակարգային խնդիր է հանդիսանում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ձևավորումը, որը որպես սահմանադրական դրույթ ամրագրված է ՀՀ Սահմանադրության մեջ: Հայ-ադրբեջանական և հայ-թուրքական սահմանների փակվածության պայմաններում մտահոգիչ է վրաց-հայկական սահմանամերձ բնակավայրերի միջև վերջին տարիներին համագործակցության մակարդակի նվազումը, ըստ էության՝ Հարավային Կովկասի տարածաշրջանում հասարակությունների միջև մեկուսացվածության աստիճանը գնալով ավելի է մեծացել:

Թվում էր, թե նշված միտումը կարող էր կասեցնել 2009 թվականի հոկտեմբերին Ցյուրիխում հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումը, սակայն ինչպես ցույց տվեց ժամանակը, այն նույնպես որևէ տեսանելի լավատեսություն չի ներշնչում: Արձանագրություններին հաջորդեց բազմաբնույթ երկկողմանի հանդիպումներ փորձագետների, արվեստի գործիչների, երիտասարդների մասնակցությամբ, սակայն դրանք չէին ելնում երկու պետություններում գոյություն ունեցող խնդիրների ընդհանրությունների բացահայտման և դրանց լուծման ուղղությամբ համագործակցած աշխատանքների իրականացման սկզբունքից:

## **Քաղաքացիական հասարակության մարտահրավերները**

Թեև Հայաստանի Հանրապետությունում գրանցված են չորս հազարից ավելի հասարակական կազմակերպություններ, սակայն տեղական և ազգային մակարդակներում որոշումների ընդունման գործընթացում քաղաքացիական և հասարակական մասնակցության մակարդակը մնում է անբավարար: Դա պայմանավորված է ոչ միայն իրավական դաշտի սահմանափակ հնարավորություններով, այլև հասարակական կազմակերպությունների չկայացվածությամբ: Հատկապես մեծ է քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացման մակարդակի տարբերությունը մայրաքաղաքի և ոչ մայրաքաղաքային տարածաշրջանների միջև:

Քաղաքացիական հասարակության ինստիտուտների գործունեության ֆինանսական աղբյուրների թվում դեռևս քիչ տեղ ունեն ներքին ռեսուրսները: Հատկապես մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների համար ֆինանսական ռեսուրսների ներքին աղբյուրները անհասանելի են: Դա պայմանավորված է ոչ միայն գործարար միջավայրի մեծ կախվածությամբ գործադիր իշխանության մարմիններից, այլև նրանց քրեականացվածությունից:

Երկրորդ է, իրականացվել են հասարակական կազմակերպությունների գործունեության ազդեցության մի քանի գնահատումներ<sup>48</sup>, բայց դրանք էական նշանակություն չեն ունեցել հասարակական կազմակերպությունների զարգացման համար:

Պարբերաբար, հատկապես իշխանության կողմից վերահսկվող լրատվական միջոցներով, իրավապաշտպանական գործունեության և կազմակերպությունների նկատմամբ տարածվում են վարկաբեկող, նրանց նշանակությունը և առաքելությունն աղձատող նյութեր, որոնց նպատակն է հասարակական կազմակերպությունների մասին հասարակության մոտ բացասական կարծիքի ձևավորումը: Նման գործելակերպը և մոտեցումները խոչընդոտող գործոն են հանդիսանում իրավապաշտպան գործու-

<sup>48</sup> Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատում, Երևան 2001

ճեղքային համախոհների մոբիլիզացման, հասարակական կազմակերպությունների գործունեության մեջ քաղաքացիների ներգրավման տեսակետից: Լրացուցիչ խոչընդոտ է հանդիսանում GONGO-ների (Governmental NGO/կառավարական ՀԿ-ներ) առկայությունը, որոնք ստեղծվում են իշխանության կառույցների կամ նրանց ներկայացուցիչների կողմից՝ որպես իշխանության շահերը սպասարկողներ և իշխանության տեսակետները քաղաքացիական հասարակությունում ներկայացնողներ: Սրան զուգահեռ, այնուամենայնիվ, վերջին 3 տարիներին նկատելի է փոքրաթիվ հասարակական կազմակերպությունների միջև ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ համագործակցությունը մարդու իրավունքների պաշտպանության, շահերի պաշտպանության բնագավառներում: Կարելի է որպես այդ համագործակցության նկատմամբ իշխանությունների կողմից վերաբերմունքի փաստ համարել վերջին ժամանակներում մի շարք օրենսդրական փոփոխությունների փորձերը: Մասնավորապես՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում ՀՀ կառավարության կողմից փոփոխությունների, առաջարկությունների ներկայացումը, որով փորձ է արվում բարձրացնել հասարակական կազմակերպությունների վերահսկման մակարդակը իշխանության կողմից: 2010 թվականի սեպտեմբերի 1-ից ուժի մեջ մտավ «ՀՀ արդարադատության նախարարության կազմում ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության վերահսկողության վարչության ստեղծման մասին» ՀՀ կառավարության որոշումը, որը հանդիսանում է միավորումների ազատության սահմանափակման իրավական ակտ:

## Կազմակերպության ռազմավարական և օպերատիվ նպատակներ

Կազմակերպության 2011-2015 թթ. ռազմավարական նպատակները և խնդիրները ձևակերպվել են իրավիճակի վերլուծության արդյունքում բացահայտված խնդիրների հիման վրա:

### Քաղաքացիական նախաձեռնություն և շահերի պաշտպանություն

#### Ռազմավարական նպատակ 1

##### Հասարակական մասնակցային մեխանիզմների խթանում

- Կոռուպցիայի դեմ պայքարի հասարակական և իրավական մեխանիզմների արդյունավետության բարձրացում
- Պետական միջոցների կառավարման նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների զարգացում և հզորացում
- Պետական և տեղական բյուջեից մարդու իրավունքների բնագավառներին հատկացվող միջոցների վերաբերյալ ինստիտուտի ձևավորում, ներդրում և կիրարկում
- Ժողովրդավարական չափանիշներին համապատասխան ընտրությունների ապահովման ուղղությամբ դիտորդական ինստիտուտի հզորացում
- Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներում քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնում և համագործակցության մեխանիզմների զարգացում
- Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների հաշվետվողականության և թափանցիկության բարձրացմանը նպաստում

#### Ռազմավարական նպատակ 2

##### Մարդու իրավունքների պաշտպանության, խաղաղասիրության և քաղաքացիական նախաձեռնությունների աջակցության նպատակով շահերի պաշտպանության քաղաքականության մշակում և իրականացում

- Մարդու իրավունքների պաշտպանության, խաղաղասիրության և քաղաքացիական նախաձեռնությունների վերաբերյալ հանրային իրազեկման կոնկրետ քաղաքականությունների մշակում և իրականացում
- Օրենսդրական առաջարկությունների ընդունման նպատակով քաղաքականությունների մշակում և իրականացում
- Հայաստանում սոցիալական ապահովության և սոցիալական պաշտպանությանն ուղղված քաղաքականության արդյունավետության բարձրացում
- Եվրոպական սոցիալական խարտիայի լրացուցիչ արձանագրությամբ սահմանված կոլեկտիվ բողոքների ներկայացման մեխանիզմի ներդրմանը նպաստում
- Փակ և կիսափակ հաստատությունների գործունեության բարեփոխումներին ուղղված քաղաքականության մշակում և իրականացում
- Կոնֆլիկտից տուժածների (անհայտ կորածներ, նախկին ռազմագերիներ, փախստականներ, ներքին տեղահանվածներ) շահերի պաշտպանության քաղաքականության արդյունավետության բարձրացում



## Մարդու իրավունքներ

### Ռազմավարական նպատակ 1

#### Օրենսդրության և դրա կիրառման համապատասխանեցում միջազգային չափանիշներին քաղաքական, քաղաքացիական և սոցիալական իրավունքների պաշտպանության բնագավառներում

- Արդար դատաքննության իրավունքի պաշտպանության արդյունավետության բարձրացում
- Մարդու իրավունքների պաշտպանության ազգային մեխանիզմների հզորացում
- Մարդու իրավունքների պաշտպանության ՄԱԿ-ի և եվրոպական մեխանիզմների կիրառման տարածում
- Փակ և կիսափակ հաստատությունների գործունեության համապատասխանեցումը մարդու իրավունքների միջազգային չափանիշներին
- Իրավապահ համակարգում վատ վերաբերմունքի դրսևորումների կանխարգելման մեխանիզմների արդյունավետության բարձրացում
- Վարչարարության բնագավառում մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացում
- Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կառույցների հետ համագործակցության զարգացում
- «Անհայտ կորածի մասին» ՀՀ օրենքի արդյունավետ կիրարկմանը նպաստում

### Ռազմավարական նպատակ 2

#### Մարդու իրավունքների վկաների ինստիտուտի ներդրում

- Մարդու իրավունքների խախտումներին արագ արձագանքման մեխանիզմների արդյունավետության բարձրացում
- Ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր մեխանիզմների մշակում, կիրառում, զարգացում և դրանց արդյունավետության բարձրացում
- Իրավապաշտպանական շարժման ընդլայնում

## Խաղաղասիրություն

### Ռազմավարական նպատակ 1

#### Ռազմականացման մակարդակի նվազեցմանը նպաստում

- Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության զարգացում ու արդյունավետության բարձրացում
- Պաշտպանական գերատեսչության հաշվետվողականության և թափանցիկության մեծացմանը նպաստում

### Ռազմավարական նպատակ 2

#### Քաղաքացիների խաղաղասիրական պոտենցիալի հզորացում

- Սևծովյան համագործակցության անդամ երկրների քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ համագործակցության զարգացում
- Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից իրականացվող խաղաղասիրական գործունեության արդյունավետության բարձրացմանը նպաստում
- Խաղաղասիրական գործունեության մեթոդների զարգացում

### Ռազմավարական նպատակ 3

#### Մեկուսացված<sup>49</sup> հասարակությունների միջև փոխվստահության և երկխոսության զարգացում

##### Երիտասարդների շրջանում

- Մեկուսացված հասարակությունների ներկայացուցիչների միջև համագործակցության զարգացում
- Մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության արժեքների տարածում մեկուսացված հասարակությունների ներկայացուցիչների շրջանում

##### Մերձսահմանային տարածաշրջանների բնակիչների շրջանում

- Հայ-վրացական սահմանամերձ բնակավայրերի քաղաքացիների միջև համագործակցության խոչընդոտների նվազեցում
- Հայ-ադրբեջանական սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների միջև երկխոսության վերականգնում և զարգացում

## ՀՔԱ Վանաձորի գրասենյակն իր գործունեությունն իրականացնելու համար որդեգրել է հետևյալ ռազմավարությունները.

**Քննարկումներ, հրապարակումներ, սեմինարներ, ուսուցման ծրագրեր, համատեղ ակցիաներ և գործողություններ, ուսումնասիրություններ, մոնիթորինգ, լոբբինգ, ԶԼՍ-ների ընդգրկում, հեռուստառադիոքննարկումներ:**

<sup>49</sup> Սույն ռազմավարության մեջ մեկուսացված հասարակություն ասելով նկատի է առնվում կոնֆլիկտի մեջ գտնվող պետությունների հասարակությունները



